ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 112780863 S4002

Պետության կարիքների համար «ԱրմենՏել» ՓԲԸ կողմից բաժանորդային մատուցվող Hi-Line ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման պետական գնման

ք. Երևան 10/04/2014 թ.

Հեռահաղորդակցության օպերատոր «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գործում է համաձայն իրեն տրամադրված թիվ 60 արտոնագրի (լիցենզիայի) և ընկերության կանոնադրության, այսուհետ «Օպերատոր» ՇԿԲ ԿՏ ԿՎԶԾ Խոշոր բիզնեսի հետ աշխատող բաժին, ի դեմս լիազորված անձ՝ Խոշոր բիզնեսի հետ աշխատող բաժնի ղեկավար՝ Գոռ Զատիկյանի, մի կողմից, և մյուս կողմից «Բաժանորդ» ՊՊԳՎ Նոր-Նորքի պահպանության բաժին ի դեմս ղեկավար՝ Ոստիկանության գնդապետ Ա.Շահնազարյանի, որը գործում է №413-Ա հրամանի հիման վրա կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Սույն պայմանագրով "Օպերատորը" պարտավորվում է "Բաժանորդին" մատուցել հանրային էլեկտրոնային հաղորդակցության Hi-Line ինտերնետ հասանելիության ծառայություն, իսկ "Բաժանորդը" պարտավորվում է "Օպերատորին" վճարել մատուցված հանրային էլեկտրոնային հաղորդակցության Hi-Line ինտերնետ հասանելիության ծառայության համար սույն պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում. Ընդ որում հավելված 1-ում ամրագրված գինը սահմանվում է ելնելով "Բաժանորդի" կողմից սույն պայմանագրի կնքման պահին և/կամ սույն պայմանագրի 12-րդ կետում ամրագրված դեպքերում ընտրված սակագնային տարբերակից, որը նշվում է "Բաժանորդի" ներկայացված հայտում (դիմում-կարգագրում): "Բաժանորդի" հայտը (դիմում-կարգագիրը) կազմում է սույն պայմանագրի անբաժանելի մաս:

2. Սույն պայմանագրի կնքման պահին "Բաժանորդը" օգտագործում է "Օպերատորի" Հանրային էլեկտրոնային հաղորդակցության հասանելիություն ցանցի Կողմերի միջև երկկողմանի համաձայնեցված և ստորագրված առանձին փաստաթղթերում կամ սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ում ամրագրված հեռախոսահամարի տակ գործող բաժանորդային գիծը Hi-Line ծառայությունը ստանալու համար:

3. Hi-Line ծառայությունից օգտվելու ժամանակահատվածում "Բաժանորդին" տրամադրվում է իդենտիֆիկացիոն ժամանակավոր համարը, որը ամրագրվում է Կողմերի միջև երկկողմանի ստորագրված առանձին փաստաթղթերում կամ սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ում:

4. "Օպերատորը" պարտավոր է բաժանորդի հեռախոսահամարին Hi-Line ծառայությունն ակտիվացնել սույն պայմանագիրը կնքելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվի առնելով առկա տեխնիկական հնարավորությունները:

5. "Օպերատորը" պայմանագրի կնքման օրվանից մեկ ամսվա ընթացքում իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե ծառայության մատուցումը ընդհանրապես կամ "Բաժանորդի" կողմից ընտրված սակագնային տարբերակի պայմաններով տեխնիկապես հնարավոր չէ:

6. Սույն պայմանագրով Hi-line ծառայության մատուցումը ապահովելու համար "Օպերատորի" կողմից "Բաժանորդին" առանձին պայմանագրով ի սեփականություն կարող է փոխանցվել անհրաժեշտ վերջնային սարքավորումները (ADSL մոդեմ, սպլիտեր և այլն): Բոլոր դեպքերում "Բաժանորդի" կողմից օգտագործվող վերջնային սարքավորումները պետք է համատեղելի լինեն "Օպերատորի" ցանցի հետ: "Օպերատորից" ձեռք բերված վերջնային սարքավորումների փոխարեն այլ սարքավորումներ օգտագործելու դեպքում:

7. Սույն պայմանագրի համաձայն "Օպերատորի" կողմից "Բաժանորդին" վճարման ենթակա գումարը (պայմանագրի գինը) կազմված է.

Ծառայությունների վճարից՝ 54 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) տարեկան, որը հաշվարկվում սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ի համաձայն և վճարվում է ամսական կտրվածքով:

8. "Օպերատորն" էլեկտրոնային փոստով "Բաժանորդին" է ներկայացնում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 2-ով և 3-ով ամրագրված օրինակելի ձևերի համապատասխան կազմված հանձնման-ընդունման արձանագրություն և հաշիվ՝ Հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-րդ օրվանից սկսած, սակայն ոչ ուշ, քան 25-ը:

*Տվյալ տարվա դեկտեմբեր ամսվա գումարը "Բաժանորդը" տրամադրում է որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

Եթե "Օպերատորը" "Բաժանորդին" մատուցում է նաև այլ պայմանագրերով սահմանված էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, ապա "Օպերատորը" կարող է "Բաժանորդին" ներկայացնել բոլոր մատուցված ծառայությունների գծով մեկ միասնական հանձնման-ընդունման արձանագրություն, ինչպես նաև մեկ միասնական հաշիվ՝ կից լուսանկարների առանձնացված հաշիվներով:

9. "Բաժանորդը" բաժանորդային վճարն ու մատուցված ծառայության արժեքը վճարում է անկանխիկ դրամական միջոցները "Օպերատորի" հաշվարկային հաշիվ փոխանցելու միջոցով. Վճարումը համարվում է կատարված դրամական միջոցները "Օպերատորի" հաշվեհամարին մուտքագրվելու պահից:

10. «Օպերատորի» կողմից "Բաժանորդի" բաժանորդային վճարը և մատուցված հեռախոսակապի ծառայության դիմաց հաշվարկված գումարները «Բաժանորդը» պարտավոր է վճարել մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա վերջին օրը ներառյալ, բացառությամբ դեկտեմբեր ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար վճարման ենթակա գումարների, որը վճարվում է տվյալ տարվա դեկտեմբեր ամսին:

11. Մատուցված ծառայությունների ծավալը որոշվում է "Օպերատորի" բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա: Նշված գրանցումները/տվյալները հանդիսանում են "Բաժանորդին" մատուցվող ծառայությունների և դրանց ծավալների մասին անժխտելի ապացույց:

12. "Բաժանորդն" իրավունք ունի հաշվարկային ամսվա ընթացքում պատվիրել լրացուցիչ Hi-Line սակագնային մեգաբայթային փաթեթ սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ում ամրագրված գնացուցակի համապատասխան: Հաշվետու ամսվա ընթացքում լրացուցիչ Hi-Line սակագնային մեգաբայթային փաթեթի պատվիրման դեպքում "Բաժանորդի" կողմից տվյալ ամսվա համար ենթակա են վճարման ինչպես գործող, այնպես էլ լրացուցիչ սակագնային մեգաբայթային փաթեթների համար սահմանված վճարները՝ անկախ օգտագործված ծավալներից, ընդ որում հաշվետու ամսվա ընթացքում "Բաժանորդի" կողմից լրացուցիչ սակագնային փաթեթ պատվիրելու դեպքում նախորդ սակագնային փաթեթի մնացորդը (չօգտագործված մասը) զրոյացվում է: Ընթացիկ ամսում "Բաժանորդը" նույն մեգաբայթային սակագնային փաթեթը չի կարող պատվիրել երկու անգամից ավել:

13. Հաշվարկային ամսվա ընթացքում սույն պայմանագրի լուծման դեպքում՝

- եթե "Բաժանորդը" օգտվում է մեգաբայթային սակագնային փաթեթից, "Բաժանորդը" պարտավոր է ընթացիկ ամսվա Hi-Line մեգաբայթային սակագնային փաթեթի համար վճարել գնացուցակով սահմանված ամսական գինը ամբողջությամբ:

-եթե "Բաժանորդը" օգտվում է անսահմանափակ սակագնային փաթեթից, "Բաժանորդը" պարտավոր է ընթացիկ ամսվա Hi-Line անսահմանափակ սակագնային փաթեթի համար վճարել "Օպերատորի" կողմից տրամադրված ծառայության օրերին համապատասխան:

"Օպերատորի" կողմից կարող է սահմանվել պայմանագրի լուծման ժամանակ վերջնահաշվարկի հատուկ կանոններ՝ "Բաժանորդի" կողմից պայմանագրի լուծման պահին օգտագործվող սակագնային փաթեթի պայմաններին համապատասխան, որոնք ամրագրվում են սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Դիմում-կարգագրում:

14. Մատուցված Hi-Line ծառայության դիմաց սույն պայմանագրի 10-րդ կետում սահմանված ժամկետներում "Բաժանորդի" կողմից վճարումներ չկատարելու դեպքում "Օպերատորի" կողմից "Բաժանորդին" մատուցվող Hi-Line ծառայությունը ժամանակավորապես կասեցվում է: Կասեցման ժամանակահատվածի համար ծառայության գումարը հաշվարկվում է և ենթակա է վճարման:

15. Ծառայության կասեցման ամսվանը հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ բաժանորդի կողմից վճարում չկատարելու դեպքում Hi-Line ծառայության մատուցումը դադարեցվում է, և պայմանագիրը լուծվում է առանց ծանուցման:

16. "Բաժանորդի" կողմից չվճարման պատճառով կասեցված Hi-Line ծառայությունը մինչև "Օպերատորի" նախաձեռնությամբ սույն պայմանագրի լուծումը "Բաժանորդի" կողմից վճարումները կատարելուց հետո վերաակտիվացվում է 0 դրամ սակագնով: Պայմանագրի լուծումից հետո "Բաժանորդի" հեռախոսագծին Hi-Line ծառայությունը ակտիվացվում է ընդհանուր հիմունքներով:

17. Hi-Line ծառայությունը "Բաժանորդին" է մատուցվում վերջնական օգտագործման համար և նախատեսված չէ Բաժանորդի կողմից այն երրորդ անձանց առաջարկելու/վերավաճառելու համար:

18. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, գործում է մինչև _____ թ.:

19. Սույն պայմանագրի գործողությունը առանց ծանուցման դադարեցվում է Hi-line ծառայության մատուցման համար օգտագործվող ֆիքսված հեռախոսագծի ապամոնտաժման պարագայում՝ ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրի լուծման դեպքում:

20. Սույն պայմանագիրը կարող է լուծվել՝

20.1 "Բաժանորդի" նախաձեռնությամբ՝ այդ մասին "Օպերատորին" նախօրոք 10 աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցելու պայմանով:

20.1.1 "Օպերատորի" կողմից սույն պայմանագրի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելու դեպքում:

20.2 "Օպերատորի" նախաձեռնությամբ՝

20.2.1 "Բաժանորդի" կողմից սույն պայմանագրի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելու դեպքում,

20.2.2 Տեխնիկական պատճառներով ծառայությունը մատուցելու անհնարինության դեպքում՝ նախօրոք գրավոր ծանուցելու և վերջնահաշվարկ կատարելու պայմանով:

20.2.3 "Բաժանորդի" գտնվելու վայրում տեղադրված ֆիքսված հեռախոսագծի բաժանորդի կողմից Hi-Line ծառայությունն իր բաժանորդային գծի միջոցով ստանալու դիմումը բավարարելու դեպքում:

21. Hi-Line ծառայության մատուցման լրացուցիչ և/կամ հատուկ պայմանները, ներառյալ բայց չսահմանափակված առանձին սակագների, սակագնային փաթեթների և "Օպերատորի" կողմից առաջարկվող կոմերցիոն այլ առաջարկների պայմաններով, հրապարակվում են Օպերատորի պաշտոնական www.beeline.am կայքում:

22. "Օպերատորը" պարտավոր է սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին

23. "Օպերատորը" իրավունք ունի "Բաժանորդից" պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ "Բաժանորդի" կողմից սույն պայմանագրի 10 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն Պայմանագրի 26 կետով նախատեսված տույժը:

24. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում «Օպերատոր»-ից գանձվում է տուգանք խախտում կատարելու ամսվա դրությամբ պայմանագրի գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

24.1 "Բաժանորդն" իրավունք ունի պահանջել 25 և 26 կետերում նշված տուժանքը:

25. Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում «Օպերատոր»-ից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ խախտում կատարելու ամսվա դրությամբ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

26. "Բաժանորդի" կողմից պայմանագրի 10-րդ կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում "Բաժանորդի" նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

27. Սույն պայմանագրի փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքման միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մաս, բացառությամբ սույն կետով նախատեսված դեպքերի:

Եթե սույն պայմանագրում և սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ում ամրագրված գնացուցակում/սակագներում առկա է սակագին, որը հաստատված է համապատասխան լիազորություններ ունեցող պետական մարմնի և/կամ պետական լիազորություններով օժտված մարմնի կողմից և ՀՀ օրենսդրության համաձայն կարող է փոփոխվել այդ մարմնի կողմից, ապա սույն պայմանագիրը դրա անբաժանելի մաս կազմող հավելված 1-ում և սույն պայմանագրում ամրագրված տվյալ սակագնի մասով համարվում է փոփոխված համապատասխան լիազորություններ ունեցող պետական մարմնի և/կամ պետական լիազորություններով օժտված մարմնի կողմից նոր սակագին հաստատելու և Ընկերության կողմից այն ներդնելու օրվանից:

Եթե "Օպերատորը" պետական մարմնի որոշման համաձայն ի կատարումն այդ որոշման պարտադրված իրականացնի փոփոխություն սույն պայմանագրում և սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ում ամրագրված գնացուցակում/սակագներում, ապա սույն պայմանագիրը դրա անբաժանելի մաս կազմող հավելված 1-ում և սույն պայմանագրում ամրագրված տվյալ սակագնի մասով համարվում է փոփոխված Ընկերության կողմից ի կատարումն պետական մարմնի որոշման նոր սակագին հաստատելու և Ընկերության կողմից այն ներդնելու օրվանից:

28. Սույն պայմանագրի լուծումը կամ դադարումը կամ կասեցումը հիմք չէ Կողմերի ֆինանսական պարտավորությունների համապատասխանաբար դադարեցման կամ կասեցման: Ֆինանսական պարտավորությունների մասով պայմանագրի գործում է մինչև դրանց ամբողջ ծավալով կատարումը:

29. Եթե տվյալ տարում "Բաժանորդի" համար բյուջեով նախատեսվել են ավելի քիչ միջոցներ, քան սույն պայմանագրի գինն է, ապա հաջորդող տարիներին Ծառայությունների մատուցումը կիրականացվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ծառայության մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

30. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

*նախատեսվում է ՀՀ կառավարության 18/01/2002թ. թիվ 48 որոշման 66-րդ կետով սահմանված պահանջի կատարման նպատակով:

7. Կողմերի իրավաբանական հասցեները

7. Կողմերի իրավաբանական հասցեները

Օպերատոր»

ՇԿԲ ԿՏ ԿՎՋՇ Խոշոր բիզնեսի հետ աշխատող բաժնի ղեկավար՝ Գոռ Զատիկյան

պաշտոն,անուն,ազգանուն

հարկ վճարողի հաշվառման համարը

0	2	5	0	0	0	5	2

ք. Երևան, Ամիրոնյան 2

հասցե, հեռախոս

ՀայԷկոնոմԲանկ 163004038879 հ/հ

բանկային ռեկվիզիտներ

ստորագրություն Կ.Տ

«Բաժանորդ»

ՊՊԳԿ Նոր-Նորքի պահպանության բաժին ղեկավար՝ Ոստիկանության գնդապետ Ա.Շահնազարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա.

հարկ վճարողի հաշվառման համարը

0	0	8	0	7	9	2	5

հ/հ

հաշվի առաքման հասցե

ք.Երևան,Բորյան փող. Նոր-Նորքի 1 զնզ. 60

գր (“ԱրմենՏել” ՓԲԸ համապատասխան հնարավորության առկայության դեպքում)

○ առձեռն , բաժանորդների ստանարկման կետում

էլ. փոստի հասցեն՝

կոնտակտային հեռախոս

ստորագրություն Կ.Տ

Հավելված 1
08.01.2014թ. կնքված թիվ 112780863 պայմանագրի

Տեխնիկական բնութագիր-գնացուցակ

Ծառայության տեսակ	Քանակ	Բաժանորդային վարձ ներառյալ ԱԱՀ	Քանակ/ծավալ	Տարեկան գումար ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ
բաժանորդային վճար ըստ պլանի հիմնական հեռախոսագիծ	հատ	4800	6	345 600
բաժանորդային վճար ըստ պլանի ՁՀԱՆ	հատ	200	2	4800
Բաժանորդային վարձ ըստ պլանի Ուղիղ գիծ	հատ	3600	4	172 800
Ընդամենը				523 200

«Օպերատոր»

ՇԿԲ ԿՏ ԿՎՁՄ խոշոր բիզնեսի հետ աշխատող բաժնի ղեկավար՝ Գոռ Զատիկյան

պաշտոն,անուն,ազգանուն

հարկ վճարողի հաշվառման համարը

0	2	5	0	0	0	5	2

ք. Երևան, Ահարոնյան 2

հասցե, հեռախոս

ՀայԷկոնոմԲանկ 163004038879 հ/հ

բանկային ռեկվիզիտներ

ստորագրություն Կ.Տ

«Բաժանորդ»

«Բաժանորդ»
ՊՊԳԿ Նոր-Նորքի պահպանության բաժին
ղեկավար՝ Ուստիկանության գնդապետ
Ա.Շահնազարյանի, որը գործում է
կանոնադրության հիման վրա.

հարկ վճարողի հաշվառման համարը

0	0	8	0	7	9	2	5

հ/հ

հաշվի առաքման հասցե

ք.Երևան,Բորյան փող. Նոր-Նորքի 1 զնգ. 60

գր (“ԱրմենՏել” ՓԲԸ համապատասխան հնարավորության առկայության դեպքում)

○ առձեռն , բաժանորդների ապասարկման կետում

էլ. փոստի հասցեն

կոնտակտային հեռախոս

ստորագրություն Կ.Տ